ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2012

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրում պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով Դուք կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 Ասորեստանյան արձանագրություններում ե՞րբ է հիշատակվել Սարդուրի III-ը:

1) Ք. ա. 643 թ.
2) Ք. ա. 609 թ.
3) Ք. ա. 833 թ.
4) Ք. ա. 743 թ.

2 Ե՞րբ Անտոնիոսն արշավեց Հայաստան:

1) Ք. ա. 43 թ.
2) Ք. ա. 34 թ.
3) Ք. ա. 31 թ.
4) Ք. ա. 36 թ.

3 Ե՞րբ մոնղոլները ջախջախիչ պարտության մատնեցին Ջալալեդդինին:

1) 1236 թ.
2) 1222 թ.
3) 1219 թ.
4) 1231 թ.

4 Ե՞րբ են թուրքերը պաշարել Երևանի բերդը:

1) 1724 թ. հունիսի 7-ին
2) 1724 թ. հուլիսի 7-ին
3) 1723 թ. հունիսի 7-ին
4) 1723 թ. հուլիսի 7-ին

5 Երբ է հիմնադրվել դաշնակցության Թավրիզի «Խարիսխ» զինագործարանը:

1) 1892 թ.
2) 1893 թ.
3) 1890 թ.
4) 1891 թ.

6 Ե՞րբ ՀՀ կառավարությունը և Հայոց կենտրոնական ազգային խորհուրդը Թիֆլիսից ժամանեցին Երևան:

1) 1918 թ. օգոստոսի 1-ին
2) 1918 թ. հուլիսի 17-ին
3) 1918 թ. հունիսի 17-ին
4) 1918 թ. հունիսի 7-ին

7 Ե՞րբ Միջագետքի հատուկ ճամբարներում ապաստանած հայ գաղթականների առաջին խումբը նավերով տեղափոխվեց Բաքում:

1) 1922 թ. հունվարի 10-ին
2) 1922 թ. դեկտեմբերին
3) 1921 թ. հունվարի 10-ին
4) 1921 թ. դեկտեմբերին

8 Ե՞րբ է բացվել ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղը՝ Արմֆանը:

1) 1935 թ.
2) 1938 թ.
3) 1925 թ.
4) 1943 թ.

9 Ո՞վ է հատել մեզ հասած առաջին հայկական արքայական դրամները:

1) Երվանդ III-ը
2) Արշամը
3) Շամը
4) Երվանդ IV-ը

10 Բյուզանդիայի ո՞ր կայսրը համաձայնություն տվեց, որ Մեսրոպ Մաշտոցը դպրոցներ բացի նաև Արևմտյան Հայաստանում:

1) Մարկիանոս
2) Թեոդոսիոս II
3) Վաղես
4) Թեոդոսիոս I

11 Ո՞վ էր Վանանդի երկրորդ թագավորը:

1) Աբասը
2) Գուրգենը
3) Գագիկը
4) Մուշեղը

12 Ո՞վ **չի** մասնակցել 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի օրերին Հայաստանի ազատագրության նախագծի մշակմանը և ռուսական արքունիք ներկայացնելուն:

1) Խաչատուր Լազարյանը
2) Ալեքսանդր Խուդաբաշյանը
3) Հովսեփ Արղությանը
4) Կարապետ Արղությանը

13 Ո՞րն է հայ մամուլի ամենաերկարակյաց պարբերականը:

1) «Բազմավեպը»
2) «Ազգասերը»
3) «Ազդարարը»
4) «Մշակը»

14 Ո՞վ է ընտրվել Ռուսաստանում ապրող հայերի պատգամավորական Կենտրոնական ժողովի նախագահ:

1) Ավետիս Ահարոնյանը
2) Հովհաննես Քաջազնունին
3) Սիմոն Զավարյանը
4) Հակոբ Զավրյանը

15 Թվարկված հայ արվեստագետներից ո՞վ ճարտարապետ չէր:

1) Մարկ Գրիգորյանը
2) Երվանդ Քոչարը
3) Միքայել Մազմանյանը
4) Կարո Հալաբյանը

16 Ո՞վ էր Հայրենական մեծ պատերազմում առաջին հայ հերոսը:

1) Նելսոն Ստեփանյանը
2) Գևորգ Վարդանյանը
3) Կարապետ Սիմոնյանը
4) Լազր Չափչախյանը

17 Հին Հայաստանում ինչպես են անվանվել ծառայող ազնվականությանը պատկանող մասնատիրական տնտեսությունները:

1) տերունի կալվածքներ
2) «հող երդոյ»
3) ստրատեգիաներ
4) ագարակներ

18 Ինչպե՞ս էր կոչվում այն վարչական միավորը, որի մեջ մտնում էր Հայաստանը արաբական խալիֆայության գերիշխանության շրջանում:

1) Արմինա
2) Արմինիա
3) Արմենիա
4) Հարմինույա

19 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

ա) Սանահինի և Հաղպատի վանքերի հիմնումը:
բ) Տայքի Դավիթ կյուրապաղատի մահը:
գ) Տաշիր-Ձորագետի թագավոր Դավիթի ըմբոստությունը Գագիկ Ի-ի դեմ:
դ) Դվինի ամիրայության միացվելը Բագրատունիների թագավորությանը:

1) ա, դ, բ, գ
2) ա, գ, դ, բ
3) դ, ա, բ, գ
4) դ, գ, ա, բ

20 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

ա) Բաղեշի Ամիրդոլու վանքի դպրոցի հիմնումը:
բ) Կասրե-Շիրինի հաշտության պայմանագրի կնքումը:
գ) Շահ Աբասի կողմից հայ բնակչության տեղահանության սկիզբը:
դ) Հովհաննավանքի դպրոցի հիմնումը:

1) ա, գ, դ, բ
2) գ, ա, դ, բ
3) գ, ա, բ, դ
4) ա, գ, բ, դ

21 19-րդ դարի սկզբի իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

ա) Պարսից գահաժառանգ Աբաս-Միրզայի կրած պարտությունները Ղարաբաղում, Լենքորանում, Ասլանդուզում և Մեղրիում:
բ) Բուխարեստի հաշտության պայմանագրի կնքումը:
գ) Գեներալ Պ. Ցիցիանովի կողմից Երևանի բերդի պաշարումը դադարեցնելը և Թիֆլիս վերադառնալը:
դ) Էջմիածնի կաթողիկոսական գահի շուրջ Դավիթ և Դանիել եպիսկոպոսների միջև մղվող պայքարը:

1) դ, գ, ա, բ
2) գ, դ, բ, ա
3) դ, գ, բ, ա
4) գ, դ, ա, բ

22 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

ա) Հայաստանի անկախության մասին հռչակագրի ընդունումը:
բ) ՀՀ Գերագույն խորհրդի սահմանադրական հանձնաժողովի ստեղծումը:
գ) ՀԽՍՀ Գերագույն խորհրդի առաջին ժողովրդավարական և այլընտրանքային ընտրությունները:
դ) Բաքվի հայ բնակչության կոտորածի և տեղահանության իրականացումը Ադրբեջանի իշխանության մարմինների և ազգային ճակատի կողմից:

1) դ, գ, բ, ա
2) գ, դ, ա, բ
3) դ, գ, ա, բ
4) գ, բ, դ, ա

23 Ե՞րբ է տեղի ունեցել Ոսխայի ճակատամարտը:

1) 296 թ.
2) 297 թ.
3) 287 թ.
4) 276 թ.

24 Ո՞ր դարում է գործել նշանավոր քաղաքական գործիչ և փիլիսոփա Վահրամ Ռաբունին:

1) XII
2) XI
3) XIV
4) XIII

25 Ե՞րբ է բացահայտվել «Հայասեր-ազգասեր»-ի գործունեությունը:

1) 1875 թ.
2) 1883 թ.
3) 1886 թ.
4) 1882 թ.

26 Ե՞րբ Ադրբեջանի կողմից հրահրվեց ղարաբաղա-ադրբեջանական պատերազմը:

1) 1992 թ. փետրվարին
2) 1992 թ. հունվարին
3) 1990 թ. հունվարին
4) 1991 թ. մայիսին

27 Ստորև նշված գործիչներից ո՞վ Լևոն I թագավորի դուստր Զաբելի խնամակալներից **չէր**:

1) Ատանը
2) Կոստանդին Գունդստաբլը
3) Հովհաննես Սսեցին
4) Օշինը

28 Ո՞վ էր ռուսական զորքերի հրամանատարը Գանձակի ճակատամարտում:

1) Ա. Կրասովսկին
2) Ի. Գուդովիչը
3) Ի. Պասկևիչը
4) Վ. Մադաթովը

29 Ժամանակակից գիտական ո՞ր ճյուղի հիմնադիրն էր Զակոմո (Հակոբ) Չամչյանը:

1) էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի
2) երկրաքիմիայի
3) նուրբ օրգանական քիմիայի
4) օրգանական լուսաքիմիայի

30 Արդյունաբերացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների ձեռք բերման թվարկված աղբյուրներից ո՞րը կիրառելի **չէր** ԽՍՀՄ-ի համար:

1) Աշխատավորներին չնչին աշխատավարձ տալը:
2) Զարգացած արդյունաբերական երկրներից վարկերի ստացումը:
3) Գյուղացիության վրա ծանր հարկեր դնելը:
4) Վանքերի ու եկեղեցիների ունեցվածքի, թանգարաններում պահվող ազգային հարստության բռնագրավումը:

31 Ո՞րն էր «Արևելյան հարց» հիմնախնդրի բովանդակությունը:
Միջազգային հարաբերություններում այդպես էր անվանվում այն հիմնախնդիրը, որի հիմքում ընկած էր…

1) արևմտահայերին թուրքական լծից ազատագրելու խնդիրը:
2) օսմանյան կայսրությունը եվրոպական տիպի պետություն դարձնելու հարցը:
3) թուրքահպատակ քրիստոնյաներին ազատագրելու համար մղվող պայքարը:
4) Թուրքիայից զանազան զիջումներ կորզելու միջազգային պայքարը:

32 Ի՞նչ էր իրենից ներկայացնում հատուկ կառավարման կոմիտեն:
Այդպես անվանվում էր…

1) Փետրվարյան հեղափոխությունից հետո Ժամանակավոր կառավարության կողմից Անդրկովկասը կառավարելու նպատակով ստեղծած իշխանության մարմինը:
2) Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարում ընտրված մարմինը, որը գլխավորեց արցախցիների պայքարը:
3) Արցախյան պատերազմի շրջանում Ռոբերտ Քոչարյանի գլխավորությամբ Լեռնային Ղարաբաղում ստեղծված կոմիտեն:
4) ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության կողմից Ա. Վոլսկու գլխավորությամբ ստեղծված մարմինը, որի վրա դրվում էր ԼՂԻՄ-ի պետական մարմինների ղեկավարումը:

33 Ինչո՞ւ Արտաշես I-ը օժանդակեց Տիմարքոսի ապստամբությանը:
Որպեսզի…

1) իր իշխանությունը հաստատի Ծոփքում:
2) թուլացնի Մարաստանին:
3) Մերձավոր Արևելքում թուլացնի Սելևկյան պետության դիրքերը:
4) աջակցի իր դաշնակից Հռոմին:

34 Ինչո՞ւ Կոստանդին II կայսրը ձերբակալեց Թեոդորոս Ռշտունուն:
Որովհետև …

1) կայսրին դուր չէր գալիս հայոց իշխանի ինքնուրույն քաղաքականությունը:
2) նա Հայաստան ներխուժած արաբների դեմ որևէ պայքար չէր ձեռնարկում:
3) հայոց իշխանն առանց կայսրին տեղյակ պահելու պայմանագիր էր կնքել արաբների հետ:
4) նա մեղավոր էր Հայաստանում գտնվող բյուզանդական զորքի արաբներից կրած պարտության մեջ:

35 Դեպքերը դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

ա) Մանվել և Կոմս Մամիկոնյանների ազատվելը պարսկական գերությունից և վերադարձը Հայաստան:
բ) Խոսրով IV-ի և Գազավոն Կամսարականի ձերբակալվելն ու Պարսկաստան տարվելը:
գ) Մեծ Հայքի թագավորության բաժանվելը Հռոմի և Պարսկաստանի միջև:
դ) Համազասպ Մամիկոնյանի նշանակվելը հայոց սպարապետ:
ե) Սահակ Պարթևի նշանակվելը հայոց կաթողիկոս:

1) ե, ա, գ, դ, բ
2) ա, գ, ե, բ, դ
3) ա, ե, գ, դ, բ
4) ե, ա, գ, բ, դ

36 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

ա) Թորգոմի «Մրրիկ» խմբի հասնելը Սասուն:
բ) Հայ եկեղեցու ունեցվածքի բռնագրավման մասին օրենքի դեմ հայ ժողովրդի առաջին բողոքի ցույցը:
գ) Հայ-թաթարական առաջին ընդհարումները Երևանում:
դ) Հնչակյանների կողմից Գ. Գոլիցինի դեմ մահափորձի կազմակերպումը:
ե) Հայ եկեղեցու ունեցվածքի բռնագրավման մասին օրենքի չեղյալ հայտարարվելը Նիկոլայ II կայսեր կողմից:

1) բ, դ, ա, գ, ե
2) ա, բ, ե, դ, գ
3) բ, ա, դ, ե, գ
4) ա, բ, դ, գ, ե

37 Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցին:
«Նա քաղաքը շրջապատեց 50 կանգուն բարձրության պարիսպով, որի հաստության մեջ կային ձիերի բազմաթիվ ախոռներ: Քաղաքի արվարձանում նա կառուցեց պալատ՝ ընդարձակ զբոսայգիներով, որսատեղերով և լճերով: Մերձակայքում նա բարձրացրեց նաև հզոր մի բերդ»:

Ո՞վ է Տիգրանակերտ մայրաքաղաքի մասին վերը բերված խոսքերի հեղինակը.

1) Ապպիանոսը
2) Ամմիանոս Մարկելինոսը
3) Ստրաբոնը
4) Պլուտարքոսը

38 Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցին:
«Շարունակել բանակցությունները Հայաստանի կառավարության հետ և չստանձնել ռուսական զորքերի օգնությամբ անմիջապես խորհրդայնացնելու նախաձեռնությունը»:

Ի՞նչ է իրենից ներկայացնում վերը բերված հանձնարարականը.

1) ՌԿ(բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի 1921 թ. հունիսի 3-ի որոշումը:
2) ՌԿ(բ)Կ կենտկոմի քաղբյուրոյի 1920 թ. հոկտեմբերի 14-ի որոշումը:
3) ՌԿ(բ)Կ կենտկոմի քաղբյուրոյի 1920 թ. մայիսի 25-ի որոշումը:
4) ՌԿ(բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի 1920 թ. նոյեմբերի 4-ի որոշումը:

39 Իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերի հետ:

1. Պարթևստանի Միհրդատ II թագավորի մահը	ա) Ք. ա. 94 թ.
2. Ծոփքի միացումը Մեծ Հայքին	բ) Ք. ա. 88 թ.
3. Գոդերձ II-ի հետ հայ-պարթևական հաշտության պայմանագրի կնքումը Տիգրան II-ի օրոք	գ) Ք. ա. 93 թ.
4. Հայաստանի դեմ ուղղված հռոմեա-պարթևական պայմանագրի կնքումը	դ) Ք. ա. 87 թ.
	ե) Ք. ա. 92 թ.

1) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա
2) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ե
3) 1-դ, 2-ա, 3-բ, 4-ե
4) 1-բ, 2-ա, 3-դ, 4-ե

40 Իրադարձությունները համապատասխանեցնել տարեթվերի հետ:

1. Թուրքական բանակի կողմից Թիֆլիսի գրավումը:
2. Թուրքական բանակի կողմից Երևանի գրավումը:
3. Թուրքական բանակի կողմից Հալիձորի բերդի պաշարումը:
4. Ռուսաստանի և Թուրքիայի միջև Կ. Պոլսի պայմանագրի կնքումը:

ա) 1727 թ. մարտ
բ) 1724 թ. հունիսի 7
գ) 1723 թ. հունիս
դ) 1724 թ. հունիսի 12
ե) 1724 թ. սեպտեմբերի 26

1) 1-գ, 2-ե, 3-ա, 4-դ
2) 1-դ, 2-ա, 3-ե, 4-բ
3) 1-գ, 2-բ, 3-ա, 4-դ
4) 1-դ, 2-բ, 3-ե, 4-գ

41 Որտե՞ղ է գտնվել հնդեվրոպական նախահայրենիքը:

1) Հայկական լեռնաշխարհում, Փոքր Ասիայի արևելյան, Միջագետքի հյուսիսային և Իրանական սարահարթի հյուսիսարևմտյան շրջաններում:
2) Հայկական լեռնաշխարհի հարավում, Միջագետքում, Փոքր Ասիայի արևմտյան և Իրանական սարահարթի հարավարևելյան շրջաններում:
3) Հայկական լեռնաշխարհում, Փոքր Ասիայի արևմտյան, Միջագետքի հյուսիսային և Իրանական սարահարթի հարավարևելյան շրջաններում:
4) Հայկական լեռնաշխարհի արևմուտքում, Փոքր Ասիայում, Միջագետքի հյուսիսային և Իրանական սարահարթի հարավարևելյան շրջաններում:

42 Բերված պնդումներից ո՞րն է վերաբերում հնչակյան կուսակցությանը:

1) Այդ կուսակցության կազմակերպական ձև ընտրվեց ապակենտրոն սկզբունքը:
2) Նրանց գործունեության մեջ կարևոր տեղ ուներ զենքի հայթայթման ու կուտակման, ժողովրդին համահայկական ապստամբության նախապատրաստելու գործը:
3) Այն իր գլխավոր խնդիր էր հռչակել Արևմտյան Հայաստանի քաղաքական և տնտեսական ազատագրումը:
4) Նրանք հայ քաղաքական մտքի պատմության մեջ առաջինն էին, որ Հայկական հարցի լուծումը համարում էին ամբողջական հայրենիքում պետականության վերաստեղծումը:

43 Ո՞րն էր Առաջին աշխարհամարտի տարիներին ծավալված հայ կամավորական շարժման գլխավոր նպատակը:

1) Մերձավոր Արևելքում Ռուսաստանի ռազմաքաղաքական ծրագրերին նպաստելը:
2) Արևմտահայերին կոտորածներից և տեղահանությունից փրկելը:
3) Հայկական նահանգների ու Կիլիկիայի ինքնավարության հաստատումը՝ Ռուսաստանի հովանու ներքո:
4) Արևմտյան Հայաստանի ազատագրումը և անկախ ու միացյալ Հայաստանի ստեղծումը:

44 Խորհրդային իշխանության տարիներին Հայ դատի և պահանջատիրության խնդիրներով ինչո՞ւ էր հիմնականում սփյուռքը զբաղվում:
Որովհետև…

1) Խորհրդային Հայաստանը զրկված էր ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու հնարավորությունից:
2) սփյուռքահայ կառույցներն այդ բնագավառում մեծ փորձ էին ձեռք բերել:
3) արևմտահայ գաղթականները հաստատվել էին սփյուռքում:
4) Խորհրդային Հայաստանի ղեկավարները վտանգավոր էին համարում նման խնդիրների արծարծումը:

45 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

ա) Պարենհարկի մտցվելը Հայաստանում:
բ) Վ. Լենինի նամակ-հրահանգի ուղարկվելը Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների «կոմունիստ ընկերներին»:
գ) Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների ներքին սահմանները որոշելու նպատակով հանձնաժողովի նիստի հրավիրումը Թիֆլիսում:
դ) Հայհեղկոմի դեկրետն ապստամբության բոլոր մասնակիցներին համաներում շնորհելու մասին:
ե) Մոսկվայի պայմանագրի ստորագրումից հետո թուրքական զորքերի հեռանալն Ալեքսանդրապոլից:

1) ե, դ, բ, գ, ա
2) բ, ե, դ, ա, գ
3) ե, բ, դ, ա, գ
4) բ, դ, ե, գ, ա

46 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

ա) Հայկական 409-րդ հրաձգային դիվիզիայի կազմացրումը:
բ) Հայկական համաշխարհային կոնգրեսի հրավիրումը Նյու-Յորքում:
գ) «Տրանսիլվանիա» շոգենավով հայրենադարձների առաջին խմբի ժամանումը Բաթում:
դ) ՀՀ նախկին վարչապետ Հ. Օհանջանյանի դիմումը Ստալինին, Թրումանին և Չերչիլին՝ հայ ժողովրդին հուզող հարցը լուծելու խնդրանքով:
ե) Հայկական տարածքների հարցի քննարկումը Պոտսդամի կոնֆերանսում:

1) ե, ա, դ, գ, բ
2) դ, ա, ե, գ, բ
3) դ, ե, ա, բ, գ
4) ե, դ, ա, բ, գ

47 Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցին:
«... համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի և ցանկության, հայտարարում է, որ այսօրվանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենապես միացած են իբրև անկախ պետական միություն»:

Ո՞ւմ կողմից է արվել վերը բերված հայտարարությունը:

1) Երևանում գումարված Արևմտահայերի 2-րդ համագումարի
2) Հայաստանի Հանրապետության խորհրդարանի
3) Հայաստանի Հանրապետության կառավարության
4) Փարիզում գումարված Հայոց ազգային համագումարի

48 Կարդալ մեջբերված հատվածը և պատասխանել հարցին:
«Մենք հաստատակամորեն կձգտենք մեր առաջադրած հարցի դրական լուծմանը, որը կենսական նշանակություն ունի ամբողջ հայ ժողովրդի հետագա զարգացման համար»:

Ու՞մ կողմից են ասվել վերը բերված խոսքերը.

1) Գրիգոր Հարությունյանի
2) Յակով Զարոբյանի
3) Հենրիխ Պողոսյանի
4) Ասքանազ Մռավյանի

49 Արևմտյան Հայաստանի մարզերում 1917 թ. կազմակերպված ժողովրդական միլիցիայի ջոկատները և կամավորական խմբերը համապատասխանեցնել նրանց ղեկավարների հետ.

1. Սեբաստացի Մուրադ	ա) Ալաշկերտի շրջանի ոստիկանական ջոկատի պետ
2. Սմբատ	բ) Երզնկայի ջոկատի պետ
3. Լևոն Շաղոյան	գ) Մուշի ջոկատի պետ
4. Սեպուհ	դ) Վանի մարզի զինված խմբի ղեկավար
	ե) Բաբերդի զինված ջոկատի պետ

1) 1-բ, 2-ա, 3-դ, 4-ե
2) 1-դ, 2-ա, 3-բ, 4-գ
3) 1-դ, 2-գ, 3-ա, 4-ե
4) 1-բ, 2-գ, 3-ե, 4-ա

50 Երաժշտական ստեղծագործությունները համապատասխանեցնել դրանց հեղինակների հետ:

1. «Սայաթ-Նովա» օպերան	ա) Գրիգոր Եղիազարյան
2. «Թավջութակի և դաշնամուրի սոնատը»	բ) Առնո Բաբաջանյան
3. «Արա Գեղեցիկ և Շամիրամ» բալետը	գ) Ալեքսանդր Հարությունյան
4. «Հերոսական բալլադը»	դ) Էդվարդ Միրզոյան
	ե) Էդգար Հովհաննիսյան

1) 1-գ, 2-դ, 3-ա, 4-ե
2) 1-ա, 2-ե, 3-գ, 4-բ
3) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ
4) 1-ա, 2-բ, 3-գ, 4-ե

Բ մակարդակ

51 Նշված պնդումներից ո՞րը ճիշտ չէ:

1) Սբ. Գրիգորը, քարոզչության ու ավետարանության գործը տարածելով Հայաստանում, հարավում հասցնում է Կորդուք գավառը, Նոր Շիրական երկիր և Ատրպատական:
2) Արիստակեսի աշակերտները նրա մարմինը հանձնում են հողին Բարձր Հայքի Եկեղյաց գավառի Թիլ ավանում:
3) 607-608 թթ. Բյուզանդիայի աջակցությամբ Վրաց եկեղեցին ընդունում է քաղկեդոնականություն և անջատվում Հայ եկեղեցուց:
4) Քրիստոնեական համայնքները հայտնի էին Մեծ Հայքում՝ Ծաղկավետ լեռներում, Արարատ լեռան շրջակայքում, Սյունյաց նահանգում՝ Թանահատի վանքի տարածքում, ինչպես նաև Փոքր Հայքում:

52 Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ բնութագրում խորհրդա-քեմալական «Սրտագին և անկեղծ բարեկամության» նախաստորագրված պայմանագիրը:
Դրանով…

1) Խորհրդային Ռուսաստանը ճանաչում էր թուրքական Ազգային ուխտը և քեմալականներին խոստանում զենքի ու զինամթերքի մատակարարումներ:
2) կողմերը համաձայնության եկան Նախիջևանի մարզը՝ որպես ինքնավար տարածք Ադրբեջանի խնամակալությանը հանձնելու վերաբերյալ:
3) քեմալական զորքերը իրավունք էին ստանում հարձակվել Հայաստանի վրա:
4) կողմերը վերջնական համաձայնության եկան թուրք-հայկական սահմանագծի վերաբերյալ:

53 Նշված պնդումներից ո՞րն է ճիշտ բնութագրում «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» փաստաթղթի բովանդակությունը:
Հռչակագրով….

1) Հայաստանը հռչակվում էր անկախ պետություն:
2) հողը պետք է տրվեր գյուղացուն՝ պարբերաբար վերաբաժանման պայմանով:
3) երկրի տնտեսության հիմքում դրվում էին մասնավոր սեփականատիրական և ազատ շուկայական հարաբերությունները:
4) հանրապետության արդյունաբերական բոլոր ձեռնարկությունները ենթակա էին սեփականաշնորհման:

54 Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը:

1. Արամեատառ քարագիր կոթող (սահմանաքար)
2. Բեհիսթունյան արձանագրություն
3. Սարդուրյան տարեգրություն
4. Խալդյան դարպասի արձանագրություն

ա) Սկզբնաղբյուր, որը տեղեկություններ է տալիս Ք.ա. VI դարի վերջին քառորդի Հայաստանի վերաբերյալ:
բ) Արտաշես I-ի հողային բարեփոխման մասին վկայող սկզբնաղբյուր:
գ) Վանի թագավորության միասնական դիցարանը ներկայացնող սկզբնաղբյուրը:
դ) Սկզբնաղբյուր, որի համաձայն Վանի թագավորության զինված ուժերի թիվը 350 հազար էր:
ե) Տուշպայի հիմնադրման մասին տեղեկություններ հաղորդող սկզբնաղբյուրը:

1) 1-բ, 2-գ, 3-ե, 4-դ
2) 1-ա, 2-գ, 3-դ, 4-ե
3) 1-բ, 2-ա, 3-ե, 4-գ
4) 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ

55 Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը:

1. Հայկական ազգային կոմիտե
2. Ամերիկայի Հայկական ազգային խորհուրդ
3. Հայկական երիտասարդական միություն
4. Համազգային կենտրոնական մարմին

ա) 1960-ական թվականներին Հայաստանում գործած այլախոհների խմբակ:
բ) Դաշնակցության կողմից ԱՄՆ-ում ստեղծված կառույց, որը հայտնի է նաև Հայ դատի հանձնախումբ անունով:
գ) Կառույց, որի նախաձեռնությամբ Նյու Յորքում հրավիրվել է Հայկական համաշխարհային կոնգրեսը:
դ) Հայ քաղաքական երեք կուսակցությունների կողմից 1974 թ. կազմված կառույց՝ գործողության միասնական ծրագիր մշակելու համար:
ե) 1927 թ. Երևանի կոմերիտական կազմակերպության մեջ գործող տրոցկիստական խումբ:

1) 1-դ, 2-բ, 3-ե, 4-գ
2) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ
3) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ
4) 1-դ, 2-գ, 3-ե, 4-բ

56 Փաստարկներից ընտրել երեքը, որոնք ճիշտ են պարզաբանում, թե ի՞նչ հանգամանքներ նպաստեցին Բագրատունիների օրոք Հայաստանում նոր քաղաքների առաջացմանը:

ա) Երկրում դրամական շրջանառության մեծացումը:
բ) Առևտրի, հատկապես միջազգային առևտրի զարգացումը:
գ) Հայ նոր իշխանական տների առաջացումը:
դ) Աշխատանքի հասարակական բաժանման խորացումը:
ե) Արհեստների զարգացումը:
զ) Ճարտարապետության մեծ վերելքը:

1) բ, դ, ե
2) ա, գ, զ
3) ա, գ, դ
4) ա, բ, ե

57 Փաստարկներից ընտրել երեքը, որոնք ճիշտ են պարզաբանում հայ ազատագրական ուժերի մարտավարության վրա երիտթուրքական հեղաշրջման թողած հետևանքները:
Հայ քաղաքական կուսակցությունները…

ա) ճանաչեցին օսմանյան Թուրքիայի տարածքային ամբողջականությունը:
բ) օրակարգից հանեցին արևմտահայությանն ընդհանուր զինված ապստամբության նախապատրաստելու հարցը:
գ) առժամանակ դադարեցրին իրենց գործունեությունը:
դ) ներքին և արտաքին քաղաքականության բոլոր հարցերում սկսեցին աջակցել երիտթուրքերին:
ե) սահմանափակվեցին արևմտահայերի ինքնապաշտպանության կազմակերպմամբ:
զ) դադարեցրին ընդհատակյա գործունեությունը, ցրեցին հայդուկային խմբերը:

1) ա, բ, գ
2) գ, դ, ե
3) ա, բ, զ
4) դ, ե, զ

58 Փաստարկներից ընտրել երեքը, որոնք ճիշտ են պարզաբանում Հայաստանում նէպի կենսագործման հետևանքները:

ա) Հողային բարենորոգումների շնորհիվ լիովին լուծվեց հողային խնդիրը:
բ) Վերականգնվեց Հայաստանի գյուղատնտեսությունը:
գ) Հայաստանի տնտեսությունը հասավ նախապատերազմյան՝ 1913 թ. մակարդակին:
դ) Կուլակությունը որպես դասակարգ վերացվեց:
ե) Դրվեցին հանրապետության արդյունաբերության հիմքերը:
զ) Հայաստանը դարձավ մեքենաներ և սարքավորումներ արտադրող երկիր:

1) գ, դ, զ
2) ա, դ, ե
3) ա, բ, ե
4) բ, գ, ե

59 Ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների հետ կապված իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

ա) Հակոբ Հարությունյանի հերոսական արարքը:
բ) Ջումշուդ Շահնազարյանի հեծյալ ջոկատի մասնակցությունը Ասկերանի և այլ ճակատամարտերին:
գ) Մանուկ Բանեյանի կողմից կամավորական ջոկատի ստեղծումը:
դ) Կապիտան Սումբատովի գլխավորած հայկական կամավորական առաջին դրուժինայի ստեղծումը:
ե) Մարտիրոս Վեքիլյանի աշխարհազորայինների գործունեությունը Լոռի-Փամբակում:
զ) Գրիգոր վարդապետ Մանուչարյանի հեծյալ ջոկատի մասնակցությունը Գանձակի գրավմանը:

1) բ, զ, գ, դ, ե, ա
2) զ, բ, ե, դ, ա, գ
3) բ, զ, գ, ե, դ, ա
4) զ, բ, դ, ե, գ, ա

60 Արցախյան պատերազմի իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

ա) Ֆիզուլու, Ջաբրաիլի և Կուբաթլիի շրջանների ազատագրումը:
բ) Հայկական ուժերի կողմից Աղդամի մոտ ադրբեջանական ուժերին պարտության մատնելը:
գ) Քարվաճառի (Քելբաջարի) շրջանի ազատագրումը:
դ) ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտեի ստեղծումը:
ե) Հորադիզի երկաթուղային հանգույցի կրակակետերի ճնշումը և Հորադիզի ազատագրումը:
զ) Շահումյանի շրջանի և Մարտակերտի շրջանի մի մասի գրավումը ադրբեջանական բանակի կողմից:

1) զ, դ, բ, գ, ե, ա
2) դ, զ, գ, բ, ե, ա
3) զ, դ, գ, բ, ա, ե
4) դ, զ, ա, գ, բ, ե

61 Գտնել այն իրադարձությունը, որը խախտում է դեպքերի հաջորդականությունը:

ա) Խաչակիրների Անտիոքի իշխանության ստեղծումը:
բ) Դավիթ Ալավկաորդու դատաստանագրքի ստեղծումը:
գ) Փոքր Ասիայում սելջուկյան պետության իշխանության հաստատումը:
դ) Հովհաննես Կոմնենոս կայսեր արշավանքը Կիլիկիա:
ե) Կաթողիկոսական աթոռի հաստատումը Հռոմկլայում:
զ) Ներսես Շնորհալի կաթողիկոսի «Թուղթ ընդհանրականի» ստեղծումը:

1) ե
2) ա
3) բ
4) գ

62 Գտնել այն երկու իրադարձությունները, որոնք խախտում են ստորև բերված դեպքերի շարքի հաջորդականությունը:

ա) Պետական լեզվի մասին խորհրդարանի ընդունած օրենքի ստորագրումը Լևոն Շանթի կողմից:
բ) Հայ-վրացական հաշտության կոնֆերանսի հրավիրումը Թիֆլիսում:
գ) Արսեն Շահմազյանի ժամանումը Գորիս և գեներալ-կոմիսարի պաշտոնի ստանձնումը:
դ) Շարուր-Նախիջևանի Հայաստանին պատկանելու վերաբերյալ հրամանի ստորագրումը անգլիացի գեներալ Դևիի և Դրոյի կողմից:
ե) Արևմտահայերի 2-րդ համագումարի հրավիրումը:
զ) Հայ ժողովրդական կուսակցության 2-րդ համագումարի հրավիրումը:

1) բ, ե
2) ա, ե
3) գ, դ
4) ա, դ

63 Նշված պնդումներից որո՞նք են ճիշտ:

ա) Մանրանկարներով զարդարված առաջին ամբողջական ձեռագիրը, որը հասել է մեզ, վերաբերում է 851 թ.:
բ) Նոր Ջուղայի դպրոցի շրջանավարտներից էին Ոսկան Երևանցին, Հովհաննես Մրքուզը, Հակոբ, Աղեքսանդր և Կոստանդ Ջուղայեցի, Աստվածատուր Համադանցի կաթողիկոսները:
գ) Հայկական բանակում Բագրատունիների օրոք լեզգիներից և այլ ցեղերից օգտագործվել են սահմանափակ թվով վարձկան զինվորներ:
դ) Զեյթունցիները միայն XVI դ. առաջին կեսին պարտավորվեցին տարեկան որոշակի հարկ վճարել օսմանյան իշխանություններին՝ պահպանելով իրենց ներքին ինքնուրույնությունը:
ե) Սամուել Անեցու աշխատությունը սկսվում է արարչագործությունից և հասցվում մինչև 1180 թ.:

1) ա, գ, ե
2) ա, գ, դ
3) բ, դ, ե
4) ա, բ, ե

64 Նշված պնդումներից որո՞նք են **սխալ**:

ա) Հայաստանի Հանրապետության զինանշանի մասին օրենքը հաստատվեց 1919 թ. հուլիսի 23-ին:
բ) Անդրկովկասի խորհուրդների առաջին համագումարում ԱԽՍՀԴՄ-ն վերափոխվեց ԱԽԴՍՀ-ի:
գ) Հայաստանի Հանրապետության բարձրագույն օրենսդիր իշխանությունը՝ Հայաստանի խորհուրդը, ձևավորվեց Թիֆլիսի և Երևանի հայոց ազգային խորհուրդների հիմքի վրա:
դ) «Թուրքական ազգային ուխտը» «բուն թուրքական տարածք» էր հռչակում Արևմտյան Հայաստանը և Կիլիկիան, ինչպես նաև Կարսը, Արդահանը և Սուրմալուն:
ե) 1918 թ. հունիսի 22-26-ին Շուշիում կայացած արցախահայության առաջին համագումարը երկրամասը հռչակեց անկախ վարչաքաղաքական միավոր և կազմեց «Ղարաբաղի ժողովրդական կառավարությունը»:

1) ա, բ, գ
2) բ, դ, ե
3) ա, դ, ե
4) ա, գ, դ

65 Նշված պնդումներից որո՞նք են ճիշտ:

ա) Նեպի շրջանում Խորհրդային Հայաստանում արգելվում էին հողի առուվաճառքը, կտակելն ու գրավ դնելը, թույլատրվում էր վարձու աշխատանքի կիրառումը:
բ) Հայաստանում գյուղացիության ճնշող մեծամասնությունը կոլտնտեսություններին անդամագրվեց 1935-1937 թթ.:
գ) Խորհրդային Հայաստանում հողային հարցի լուծումը ենթադրում էր ոչ այնքան կալվածատիրական հողերի բռնագրավում, որքան հողաշինարարության անցկացում:
դ) Ստալինի պաշտամունքը գագաթնակետին հասավ 1929 թ.՝ նրա ծննդյան 50-ամյակի նշումից հետո:
ե) Որոշ հաշվարկներով՝ 1930-ական թվականներին Հայաստանում բռնությունների է ենթարկվել 15 հազար մարդ, որոնց կեսը գնդակահարվել է:

1) գ, դ, ե
2) ա, գ, ե
3) ա, բ, գ
4) ա, բ, դ

66 Կատարել համապատասխանեցում:

1) Լևոն II-ի կողմից Լամբրոնի բերդի միացումը արքունի տիրույթներին:	ա) 1206 թ.
2) Հայ-վրացական ուժերի կողմից Կարսի ազատագրումը:	բ) 1202 թ.
3) Հույն Մանդալեի որդիների ձերբակալվելը և մահապատժի ենթարկվելը:	գ) 1189 թ.
4) Խաչակրաց երրորդ արշավանքի սկիզբը:	դ) 1187 թ.
5) Թորոս I-ի և Գող Վասիլի կողմից Բերդուսի ճակատամարտում Իկոնիայի սելջուկներին պարտության մատնելը:	ե) 1113 թ.
6) Հայ-վրացական ուժերի կողմից Լոռու գրավումը:	զ) 1111 թ.
	է) 1107 թ.

1) 1-ա, 2-բ, 3-ե, 4-դ, 5-զ, 6-գ
2) 1-բ, 2-ա, 3-զ, 4-դ, 5-ե, 6-է
3) 1-ա, 2-բ, 3-ե, 4-գ, 5-է, 6-զ
4) 1-բ, 2-ա, 3-զ, 4-գ, 5-է, 6-ե

67 Հոգևոր գործիչներին համապատասխանեցնել նրանց զբաղեցրած պաշտոնների հետ.

1. Հովսեփ Արղության	ա) Սբ. Կարապետ վանքի վանահայր
2. Սիմեոն Երևանցի	բ) Էջմիածնի կաթողիկոս
3. Ներսես Վարժապետյան	գ) Վիրահայոց թեմի հոգևոր առաջնորդ
4. Կարապետ արքեպիսկոպոս	դ) Ռուսահայոց թեմի հոգևոր առաջնորդ
5. Ներսես Աշտարակեցի	ե) Կարնո թեմի առաջնորդ
6. Եսայի Հասան-Ջալալյան	զ) Կ.Պոլսի հայոց պատրիարք
	է) Գանձասարի կաթողիկոս

1) 1-է, 2-դ, 3-զ, 4-ե, 5-գ, 6-բ
2) 1-դ, 2-բ, 3-զ, 4-ե, 5-գ, 6-է
3) 1-դ, 2-բ, 3-զ, 4-ա, 5-գ, 6-է
4) 1-գ, 2-զ, 3-բ, 4-ա, 5-դ, 6-է

68 Կատարել համապատասխանեցում:

1. Հ. Օհանջանյանի կառավարության հրաժարականի ընդունումը Հայաստանի խորհրդարանի կողմից:	ա) 1920 թ. նոյեմբերի 14
2. Գ. Նժդեհի վերջնագիրը Կարմիր բանակի հրամանատարությանը՝ Զանգեզուրից հեռանալու պահանջով:	բ) 1920 թ. նոյեմբերի 18
3. Զանգեզուրի ապստամբների կողմից Գորիսի ազատագրվելը:	գ) 1920 թ. նոյեմբերի 22
4. Լոռու չեզոք գոտու վերաբերյալ հայ-վրացական համաձայնագրի ստորագրումը:	դ) 1920 թ. նոյեմբերի 21
5. ԱՄՆ-ի նախագահ Վիլսոնի իրավարար որոշումը հայ-թուրքական սահմանագծի վերաբերյալ:	ե) 1920 թ. նոյեմբերի 13
	զ) 1920 թ. նոյեմբերի 23

1) 1-զ, 2-ա, 3-բ, 4-ե, 5-դ
2) 1-դ, 2-ե, 3-բ, 4-ա, 5-գ
3) 1-զ, 2-ա, 3-դ, 4-ե, 5-գ
4) 1-գ, 2-ե, 3-դ, 4-ա, 5-զ

69 Կատարել համապատասխանեցում:

1. Ստեփան Ղամբարյան	ա) պատմություն
2. Արտեմ Ալիխանյան	բ) լեզվաբանություն
3. Մկրտիչ Ջրբաշյան	գ) քիմիա
4. Մկրտիչ Ներսիսյան	դ) գրականագիտություն
5. Տիգրան Ջրբաշյան	ե) մաթեմատիկա
6. Գուրգեն Սևակ	զ) ֆիզիկա
	է) երկրաբանություն

1) 1-գ, 2-զ, 3-ե, 4-ա, 5-է, 6-բ
2) 1-գ, 2-զ, 3-է, 4-բ, 5-ե, 6-դ
3) 1-զ, 2-գ, 3-ե, 4-ա, 5-դ, 6-բ
4) 1-զ, 2-ա, 3-է, 4-բ, 5-ե, 6-դ

70 Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը:

1. ոստան այրուձի
2. բանակ արքունի
3. սեպուհ
4. ոստանիկ

ա) Ընտրյալ նետաձիգներից բաղկացած և մշտապես արքունիքում գտնվող այրուձի:
բ) Վաղ միջնադարում թագավորի հեծելազորի տեղակայման ռազմավարական կարևոր վայր:
գ) Արշակունիների շառավիղներից ձևավորված առանձին ազնվական խավ:
դ) Թագավորական հեծելազոր:
ե) Իշխանական տան կրտսեր անդամ (կրտսեր իշխան):

1) 1-դ, 2-ա, 3-ե, 4-գ
2) 1-դ, 2-բ, 3-ե, 4-գ
3) 1-ա, 2-բ, 3-գ, 4-դ
4) 1-ա, 2-դ, 3-գ, 4-ե

71 Հասկացությունները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը:

1. Վարիչների մարմին
2. Երեքի գործադիր կոմիտե
3. Հատուկ կոմիտե
4. Հատուկ կազմակերպություն

ա) Արամ Մանուկյանի գլխավորությամբ Երևանում ստեղծված մարմինը:
բ) Երևանի ազգային խորհրդի կողմից երեքամսյա ժամկետով ընտրված, արտակարգ լիազորություններով օժտված մարմին:
գ) Արտակարգ լիազորություններով օժտված մարմին, որի վրա դրված էր հայերի բռնագաղթի և կոտորածների անմիջական կազմակերպումն ու իրականացումը:
դ) Փետրվարյան հեղափոխությունից հետո կազմված Անդրկովկասի իշխանության նոր մարմինը:
ե) Բեհաեդդին Շաքիրի ղեկավարությամբ ստեղծված մարմինը:

1) 1-ա, 2-բ, 3-դ, 4-գ
2) 1-բ, 2-ե, 3-ա, 4-գ
3) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ե
4) 1-ա, 2-գ, 3-բ, 4-ե

72 Փաստարկներից ընտրել երեքը, որոնք ճիշտ են բացատրում Հայաստանում 571 թ. սկսված հակապարսկական ապստամբության պատճառները:

ա) Պարսից արքունիքը դավանափոխության նոր հրովարտակ ուղարկեց Հայաստան:
բ) Սպանվեց Մամիկոնեից տեր Վասակի որդի Մանվելը:
գ) Նոր մարզպանի նշանակումով ավելի ծանրացան հարկերն ու տուրքերը:
դ) Երկրից դուրս բերվեց հայոց այրուձին և ուղարկվեց արևելք՝ Պարսկաստանի թշնամիների դեմ կռվելու:
ե) Խախտվում էր Արևելյան Հայաստանի իշխանական տների համակարգը:
զ) Փորձ արվեց Դվինում հիմնելու զրադաշտական պաշտամունքի ատրուշան:
է) Կրտսեր իշխաններին տրվում էր հողեր ժառանգելու իրավունք:

1) բ, գ, զ
2) գ, ե, զ
3) դ, ե, է
4) ա, բ, դ

73 Փաստարկներից ընտրել երեքը, որոնք ճիշտ են պարզաբանում Հայաստանում 1921 թ. փետրվարյան հակաբոլշևիկյան ապստամբության հետևանքները:

ա) Ապստամբության պարտությունից հետո նրա հարյուրավոր մասնակիցներ ձերբակալվեցին և նետվեցին Երևանի բանտեր:
բ) Երևանի և այլ բանտերից ազատվեցին բոլշևիկների կողմից ձերբակալված և խոշտանգված հարյուրավոր մարդիկ:
գ) Ապստամբության պարտությունից հետո դաշնակցություն կուսակցությունը դադարեցրեց իր գործունեությունը Հայաստանում:
դ) Ապստամբության անմիջական հետևանքը դարձավ Լոռու չեզոք գոտու ազատագրումը և Վրաստանի խորհրդայնացումը:
ե) Հայհեղկոմի դեկրետով ապստամբության բոլոր մասնակիցներին՝ ներառյալ ղեկավարներին, շնորհվեց համաներում:
զ) Խորհրդային իշխանությունները ձեռնամուխ եղան աքսորված հայ սպաներին ազատ արձակելու և հանրապետություն վերադարձնելու գործին:

1) ա, բ, դ
2) ա, ե, զ
3) գ, դ, ե
4) բ, ե, զ

74 Փաստարկներից ընտրել երեքը, որոնք ճիշտ են բացատրում 1960-1980-ական թվականներին սփյուռքահայերի զանգվածային տեղաշարժերի պատճառները: Դրանք պայմանավորված էին…

ա) Լիբիայում բռնկված քաղաքացիական կռիվներով:
բ) թուրք-իրանական պատերազմով:
գ) Եգիպտոսում սկսված հեղափոխությամբ:
դ) Իրանում տեղի ունեցած իսլամական հեղափոխությամբ:
ե) Թուրքիայի կողմից Կիպրոսի հյուսիսային մասի բռնազավթումով:
զ) արաբա-իսրայելական նոր պատերազմներով:

1) դ, ե, զ
2) ա, դ, զ
3) ա, բ, գ
4) գ, ե, զ

75 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

ա) Սիս և Անավարզա քաղաքների գրավումը Թորոս I-ի կողմից:
բ) Գագիկ II Բագրատունու մեկնելը Կոստանդնուպոլիս:
գ) Ապլղարիպ Արծրունու նշանակվելը Կիլիկիայի կառավարիչ:
դ) Սյունիքի Սմբատ Աշոտյան թագավորի գահակալության սկիզբը:
ե) Փիլարտոս Վարաժնունու իշխանության հիմնադրումը:
զ) Խաչակիրների կողմից Եդեսիայի գրավումը:
է) Գող Վասիլի իշխանության վերացումը:
ը) Շաղդաղյանների հաստատվելը Անիում:
թ) Տաշիր-Զորագետի թագավորության վերացումը:
ժ) Աշոտ IV-ի և Հովհաննես Սմբատի մահը:

1) դ, ժ, բ, գ, ե, ը, զ, ա, է, թ
2) ժ, գ, դ, բ, ը, ե, ա, զ, թ, է
3) դ, ժ, գ, բ, ը, ե, զ, ա, թ, է
4) ժ, գ, բ, դ, ե, ը, ա, է, զ, թ

76 Իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ:

ա) Միքայել Չամչյանի «Պատմություն Հայոց» եռահատոր աշխատության տպագրության սկիզբը:
բ) Փոքր Ղարաքիլիսայի ճակատամարտը:
գ) Աբաս Միրզայի կողմից Էջմիածնի կայազորի վրա հարձակվելը:
դ) Լոռու, Փամբակի և Շամշադինի ռուսական տիրապետության տակ անցնելը:
ե) Ղուկաս Ինճիճյանի խմբագրությամբ «Տարեգրություն» պարբերականի հրատարակության սկիզբը:
զ) Շուշիում Հովսեփ Էմինի այցելելը Իբրահիմ խանին:
է) «Նոր տետրակի» թարգմանվելը ռուսերեն և լույս տեսնելը Պետերբուրգում:
ը) Ռուսական զորքերի երկրորդ արշավանքը Երևանի վրա:
թ) Հովսեփ Էմինի մասնակցությունը Գանձակի խանի դեմ մելիք Հովսեփի մղած ճակատամարտին:
ժ) Ա. Գրիբոյեդովի «Խելքից պատուհաս» պիեսի բեմադրությունը Երևանի բերդում հեղինակի ներկայությամբ:

1) թ, զ, է, ա, ե, դ, ը, բ, գ, ժ
2) թ, զ, ա, է, ե, դ, բ, ը, գ, ժ
3) զ, թ, ա, է, դ, ե, բ, ը, ժ, գ
4) զ, թ, է, ա, դ, ե, ը, բ, ժ, գ

77 Բերված կետերից ընտրել երեքը, որոնք ճիշտ **չեն** բնութագրում եկեղեցու հանդեպ Պապ Արշակունու վարած քաղաքականությունը:

ա) Վերացնում է բերքից եկեղեցուն վճարվող տուրքը:
բ) Հոգևորականներին արգելում է ամուսնանալ:
գ) Հոգևորականների եղբայրներին, զավակներին և ազգականներին պարտադրվում է պետական ծառայություն կատարել:
դ) Ներսես Մեծի մահից հետո նրան հաջորդած Հուսիկ-Շահակին չի ուղարկում Կեսարիա՝ ձեռնադրություն ստանալու մետրոպոլիտից:
ե) Բռնագրավում է եկեղեցուն պատկանող բոլոր հողատիրույթները:
զ) Ծանրացնում է եկեղեցուց գանձվող հարկերը:
է) Փակում է կուսանոցները և այրիների ապաստանները:

1) ա, զ, է
2) բ, ե, զ
3) բ, գ, զ
4) ա, դ, է

78 Նշված պայմաններից ընտրել երեքը, որոնք ճիշտ են արտացոլում 2005 թ. նոյեմբերի 27-ի հանրաքվեի միջոցով ՀՀ Սահմանադրության մեջ կատարված փոփոխությունները:

ա) «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքում ամրագրվեց երկքաղաքացիության վերաբերյալ դրույթը:
բ) Ներդրվեց եռաստիճան դատական համակարգը և սկսեց գործել վերաքննության ինստիտուտը:
գ) Կրճատվեցին ՀՀ վարչապետի լիազորությունների շրջանակները:
դ) Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ժամկետը ավելացվեց ևս երկու տարով և դարձավ հինգ տարի:
ե) Վերանայվեց ՀՀ նախագահի գերիշխող դիրքը իշխանության ճյուղերի նկատմամբ:

զ) Բարձրացվեց խորհրդարանի դերը իշխանության մարմինների համակարգում:
է) Քաղաքամայր Երևանին տրվեց հատուկ կարգավիճակ:

1) ա, գ, զ
2) բ, դ, է
3) դ, ե, է
4) ա, ե, զ

79 Համապատասխանեցնել ճակատամարտը, տարեթիվը, գործչի անունը: Պատասխանները լրացնել առաջին խմբում առաջարկված հերթականության համաձայն:

N	Ճակատամարտը	N	Տարեթիվը	N	Գործիչը
1	Արյան լճի	1	775 թ. ապրիլի 25	1	Սմբատ Բագրատունի
2	Վարդանակերտի	2	703 թ. հունվար	2	Գուրգեն Արծրունի
3	Արճեշի	3	852 թ.	3	Համազասպ Արծրունի
4	Արձնիի	4	853 թ.	4	Արտավազդ Մամիկոնյան
		5	775 թ. ապրիլի 15	5	Մուշեղ Մամիկոնյան

1)

1	4	2
2	3	1
3	1	3
4	5	5

2)

1	4	2
2	2	1
3	5	3
4	1	4

3)

1	3	2
2	2	1
3	5	3
4	1	5

4)

1	3	3
2	2	4
3	1	2
4	5	5

80 Համապատասխանեցնել մշակութային իրադարձությունը, տարեթիվը, գործչի անունը և վայրը: Պատասխանները լրացնել առաջին խմբում առաջարկված հերթականության համաձայն:

N	Մշակութային իրադարձությունը	N	Տարեթիվը	N	Գործիչը	N	Վայրը
1	«Խառնայփնթուր տումարի, գեղեցիկ և պիտանի» տոմարացույցի տպագրությունը	1	1638 թ.	1	Աբգար դպիր Թոխաթեցի	1	Լվով
2	Անանիա առաքյալի անապատի հիմնադրումը	2	1565 թ.	2	Հովհաննես Քարմատանենց երեց	2	Երևան
3	Հայատառ ղփչաղերեն աղոթագրքի տպագրությունը	3	1620 թ.	3	Մովսես Տաթևացի	3	Նոր Ջուղա
4	Հայկական տպարանի հիմնում	4	1618 թ.	4	Խաչատուր Կեսարացի	4	Վենետիկ

1)

1	4	4	3
2	1	2	1
3	3	3	2
4	2	1	4

2)

1	2	1	4
2	3	3	2
3	4	2	1
4	1	4	3

3)

1	2	4	3
2	3	3	2
3	4	2	1
4	1	1	4

4)

1	2	1	4
2	4	3	2
3	3	2	1
4	1	4	3